Քաղվածք
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄ № 73-Լ 28.12.2021թ.
Փոփոխված ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄ № 109-Լ 30.12.2024թ.

22. Ինստիտուտի վճարովի համակարգում սովորող ուսանողական համակազմի առնվազն տասը տոկոսին՝ ուսանողների վարձավճարներից գոյացած բյուջեի առնվազն յոթ տոկոսի չափով, Ինստիտուտի միջոցների հաշվին՝ հիմք ընդունելով բարձր առաջադիմությունն **առանց վերահանձնման** (80 և ավել ՄՈԳ) և սոցիալական խումբը, իրականացնում է ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի մասնակի փոխհատուցում հետևյալ կարգավիճակ ունեցող ուսանողներին.

1) սոցիալապես անապահով (ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված անապահովության մինչև 5.00 սահմանային միավոր ունեցող ընտանիքների) ուսանողներին՝ 30 տոկոս, տվյալ ուսումնական տարվա համար,
2) 18 տարին լրանալուց հետո առանց ծնողական խնամքի մնացած ուսանողներին՝ 50 տոկոս, մինչև տվյալ կրթական ծրագրով ուսումնառության ավարտը, եթե ուսանողը հաղթահարել է ՄՈԳ-ի 70 տոկոս շեմը,
3) 23 տարին չլրացած միակողմանի ծնողազուրկ (միածնող) ուսանողներին՝ 50 տոկոս, եթե ուսանողը հաղթահարել է ՄՈԳ-ի 70 տոկոս շեմը,
4) մինչև մեկ տարեկան երեխա ունեցող ուսանողներին՝ 50 տոկոս,
5) երեք և ավելի անչափահաս երեխա ունեցող ուսանողներին՝ 50 տոկոս,
6) երկու և ավելի անչափահաս երեխա ունեցող, երկու և ավելի ուսանող երեխա ունեցող կամ ընտանիքի երկու և ավելի անդամ ուսանողներին՝ 30 տոկոս,
7) 3-րդ խմբի հաշմանդամ, այդ թվում՝ 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամ ծնող ունեցող ուսանողներին՝ 20 տոկոս,
8) մարտական հերթապահություն իրականացնող զորամասերում մարտական հերթապահության մեջ ընդգրկված պարտադիր ժամկետային զինվորական ծառայություն անցած ուսանողներին՝ 30 տոկոս, եթե ուսանողը հաղթահարել է ՄՈԳ-ի 70 տոկոս շեմը,
9) 2020 թվականի մարտական գործողությունների մասնակցի հայր կամ ամուսին ունեցող սովորողներին՝ 30 տոկոսի չափով, եթե ուսանողը հաղթահարել է ՄՈԳ-ի 70 տոկոս շեմը,
10) երկու կիսամյակ անընդմեջ առավել բարձր առաջադիմություն ցուցաբերած ուսանողներին՝ 50 տոկոս, եթե ուսանողը հաղթահարել է ՄՈԳ-ի 90 տոկոս շեմը,
11) Ինստիտուտում առնվազն 10 տարվա անընդմեջ աշխատանքային ստաժ ունեցող հիմնական աշխատող կամ հիմնական աշխատողի երեխա ուսանողներին՝ 30 տոկոս,

12) Օլիմպիական խաղերում, աշխարհի առաջնությունում՝
- ա) 1-ին տեղ գրաված ուսանողներին (բոլոր տարիքային խմբերում)՝ 60 տոկոս
- բ) 2-րդ տեղ գրաված ուսանողներին (բոլոր տարիքային խմբերում)՝ 50 տոկոս
- գ) 3-րդ տեղ գրաված ուսանողներին (բոլոր տարիքային խմբերում)՝ 40 տոկոս
- դ) 4-6-րդ տեղ գրաված ուսանողներին (բոլոր տարիքային խմբերում)՝ 30 տոկոս

13) Եվրոպայի առաջնությունում՝
- ա) 1-ին տեղ գրաված ուսանողներին (բոլոր տարիքային խմբերում)՝ 50 տոկոս
- բ) 2-րդ տեղ գրաված ուսանողներին (բոլոր տարիքային խմբերում)՝ 40 տոկոս
- գ) 3-րդ տեղ գրաված ուսանողներին (բոլոր տարիքային խմբերում)՝ 30 տոկոս
- դ) 4-6-րդ տեղ գրաված ուսանողներին (բոլոր տարիքային խմբերում)՝ 20 տոկոս

14) առանձնահատուկ դեպքերում, ինստիտուտի ռեկտորի որոշմամբ այլ կարգավիճակ ունեցող ուսանողներին՝ 30 տոկոս: